ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/28 « 18 » 01 2021 թ.

Ձեր

Պահապան ՍՊԸ (ՀՎՀՀ 00882372)
Կոտայքի մարզ, գ. Առինջ,
Պ. Սևակի 6 փող, 7/1 տարածք
էլ. հասցե՝ derzak2013@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և ''Պահապան'' ՍՊԸ-ի միջև 11 մայիսի 2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 ծածկագրով հանդերձանքի ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում ''Պահապան'' ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները մասնակի չի կատարել, չի մատակարարել 1720 հատ վերնաշապիկ սպիտակ երկարաթև, որի ընդհանուր գումարը կազմում է 8 256 000 /ութ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամ

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և ''Պահապան'' ՍՊԸ-ի միջև 11,05,2020թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-33-1/2 ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Պահապան'' ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված բանկային երաշխիքները՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Հայբիզնեսբանկ» ՓԲ ընկերություն՝ բանկային երաշխիքներով սահմանված գումարները՝ 8 256 000 /ութ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամ և 825 600 /ութ հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000664 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հարգանքով՝
Պետ, ոստիկանության գնդապետ ***Ա.Ներսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39